# ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**ՔՀԿ ինկուբատորների կարողությունների զարգացման 16 դասընթաց է անցկացվել**

Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակում ձևավորվել են քաղիասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) ինկուբատորների խմբեր, որոնց համար Երևանում, Սյունիքի, Գեղարքունիքի, Լոռու և Շիրակի մարզերում կազմակերպվում են դասընթացներ:

Հուլիս ամսվա ընթացքում ինկուբատորների 16 դասընթաց է անցկացվել՝ հայաստանյան տարբեր բնակավայրերից ներգրավված 35 ՔՀԿ ներկայացուցչի համար: Թեմաները վերաբերել են ծրագրի 9 թիրախային ոլորտներին՝ առկա խնդիրներին, նոր ինսիտուտների մոդելներին, դրանց ներդրման նպատակահարմարությանը:

Նշենք, որ Երևանում, Գավառում, Վանաձորում, Կապանում և Գյումրիում ծրագրի փորձագետների և հրավիրյալ մասնագետների կողմից դասընթացներ են անցկացվել հետևյալ թեմաներով՝

- «Միջնորդ վեճեր քաղաքացիների և հանրային իշխանության միջև. Նիդերլանդների փորձը»,
- Իրավաբանների հայկական ասոցիացիայի փորձառությունը հանրային վերահսկողության իրականացման, հանրային քաղաքականությունների մշակման, կառավարության հետ կառուցողական երկխոսության և կոալիցաների կառուցման ոլորտներում,
- Կրթության ոլորտ. Միջին մասնագիտական կրթության և վերապատրաստման արդիականացում պետական կրթական (որակավորման) ստանդարտների և համապատասխան ուսումնական ծրագրերի մշակում և ներդրում միջին մասնագիտական կրթության և վերապատրաստման մեջ,
- Կրթություն. Դպրոցներում կարիերային առնչվող խորհրդատվության համակարգի բարելավման, մշտադիտարկման և ջատագովության անհրաժեշտություն,
- Արդարադատության ոլորտ. Դատական համակարգում էթիկայի վարքագծի բարելավման անհրաժեշտություն,
- Գյուղատնտեսություն. Խաչաձև՝ էլեկտրոնային գյուղատնտեսության բարելավման և զարգացման անհրաժեշտություն,
- Հայաստան-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ), ոլորտներ, կառույցներ, քաղիասարակության մասնակցություն, ինչպես նաև ՔՀԿ-ների կողմից Եվրոպական միությունից ֆինանսական միջոցների հայթայթում,
- Քաղաքային զարգացման խնդիրներ,

- Արդարադատություն. «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում իրականացվող «Քայլ դեպի արդար Հայաստան» ծրագրի և «Աջակցություն պրոբացիային» ազգային ցանցի ներկայացում, ՔՀԿ-ների հետ համագործակցության հնարավորությունների քննարկում,
- Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերը փոփոխված Սահմանադրության լույսի ներքո. առկա մարտահրավերներ, զարգացման հեռանկարներ,
- Տնտեսություն. ՔՀԿ-ների մասնակցության մեխանիզմների թույլ մակարդակ տեղական աճի ռազմավարություններում և «խելացի համայնք» նախաձեռնություններում, այդ ռազմավարությունների և նախաձեռնությունների բարելավման, ջատագովության, մշտադիտարկման և դրանցում ՔՀԿ-ների ավելի մեծ ներգրավվածության ապահովման անհրաժեշտություն,
- Արդարադատություն. «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում իրականացվող «Սոցիալական գործընկերություն և կրթություն. համայնքահեն հեռանկարներ երիտասարդների համար» և «Գործընկերություն հանուն կրթության առաջընթացի» կոալիցիայի ներկայացում, ՔՀԿ-ների հետ համագործակցության հնարավորությունների քննարկում
- Սոցիալական. «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում իրականացվող «Հանուն որակյալ և հասանելի ներառական կրթության և սոցիալական աջակցության» ծրագրի և ծրագրի շրջանակներում հիմնադրվելիք կոալիցիայի ներկայացում, ՔՀԿ-ների հետ համագործակցության հնարավորությունների քննարկում:

Դասընթացների ավարտից հետո քաղհասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներին անհատական խորհրդատվություն են տրամադրել ծրագրի փորձագետները:

***«Կառուցողական երկխոսության հանձնառություն»*** ծրագիրն իրականացվում է ԵՄ ֆինանսավորմամբ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից գործընկերներ «Ագորա Սենթրլ Յուրոփ» ՀԿ-ի (Չեխիա), «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ» ՀԿ-ի, «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ-ի, «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի և «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միության հետ համագործակցությամբ:

Ծրագրի նպատակն է մեծացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) և դրանց կոալիցիաների/ցանցերի ազդեցությունը հանրային քաղաքականության մշակման գործընթացի վրա: Սա հնարավորություն կտա կազմակերպություններին (ովքեր արդեն իսկ աշխատում են թիրախային կոալիցիաներում) ձեռք բերել նոր ռեսուրսներ, քաղհասարակության փորձագետներին միավորել և խրախուսել իրենց մասնակցությունը տեղական և ազգային քաղաքականությունների օրակարգի ձևավորմանը, հատկորոշել ընդհանուր խնդիրներն ու առաջնահերթությունները և դիմել կառավարությանը՝ կառուցողական և ռազմավարական քաղաքականության վերաբերյալ նախաձեռնություններով:

Ծրագրի շրջանակներում ենթադրամաշնորհներ կտրամադրվեն ՔՀԿ-ներին և ՔՀԿ-ների կոալիցիաներին, որոնք կուղղվեն հանրային քաղաքականությունների զարգացմանն ու կունենան շոշափելի արդյունքներ **9 թիրախային ոլորտում**, որոնք են արդարադատությունը, մարդու իրավունքները, հանրային ֆինանսների կառավարումը, բիզնեսը, կրթությունը, սոցիալական ոլորտը. հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալական ներառում, գյուղատնտեսությունը, տնտեսությունը, էներգետիկան:

**Իրավաբանների հայկական ասոցիացիան (ԻՀԱ)** ստեղծվել է 1995թ.-ին: ԻՀԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունն իրազեկ է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված: Մինչև 2016 թ. փետրվար ամիսը ԻՀԱ-ի անվանումն էր Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա:

Աստղիկ Կարապետյան
Հանրային կապերի համակարգող

Հեռ.՝ 540199
Էլ. Հասցե՝info@armla.am
Կայք՝ http://www.armla.am, http://ccd.armla.am